

ԱՎԱԳԱՆԻ+

2014

Association of municipal councillors of Armenia, «AVAGANI+» newspaper

թիվ 69

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովում քննարկվեց «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» հարցը:

Ներկայացնելով ՀՀ կառավարության առաջիկա 3 տարիների գործունեության ծրագրի շեշտադրումները, ընդհանուր զարգացման մոտեցումներն ու տրամաբանությունը՝ ՀՀ վարչապետ Յուրի Բաբայանը կառավարության ծրագիրը որակեց որպես իրատեսական, խստապահանջ և ականջալուր:

Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, ՀՀ Նախագահի, Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրի, ՀՀ կառավարության 2013 թվականի ծրագրի հիմնական դրույթները, ինչպես նաև խորհրդարանական կուսակցությունների ծրագրերում ներկայացված՝ մշված փաստաթղթերի հետ համադրելի գաղափարները:

ՀՀ կառավարությունը, որպես իր գործունեության գերակայություն, հռչակում է ՀՀ քաղաքացուն, նրա ազատության երաշխավորումը, անվտանգության և բարեկեցության բարձրացման ապահովումը: ՀՀ կառավարության ջանքերն առավելապես ուղղվելու են ՀՀ քաղաքացու՝ ստեղծագործ աշխատանքով իր հայրենիքում իր ապագան կերտելուն: Հայրենիքը յուրաքանչյուր հայի համար դառնալու է ապահով հանգրվան և սեփական կարողությունների, աշխարհի տարբեր կողմերում կուտակած փորձն ու գիտելիքներն առավելագույնս դրսևորելու հնարավորության երկիր: Տնտեսության զարգացման նպատակով, կառավարությունը կարևորում է թե հայրենական, թե օտարերկրյա ներդրողների ներգրավումը տնտեսություն՝ ստեղծելով տնտեսական ազատ և մրցունակ միջավայր բոլորի համար: Ակնկալվում է, որ առաջիկա երեք տարիների ընթացքում տնտեսության ներքին ռեսուրսների վրա հիմնված զարգացումը Հայաստանի տնտեսական աճի ապահովման համար կունենա առաջնային նշանակություն:



ՀՀ կառավարությունն ակնկալում է արտահանման ծավալների նպատակադրված ավելացմանը հասնել հիմնականում արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության շնորհիվ. որը ենթադրում է ներքին ռեսուրսների համակարգված և արդյունավետ օգտագործում: ՀՀ կառավարությունն իր ծրագրի իրագործմամբ առաջիկա երեք տարիներին նպատակադրում է զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի միջնաժամկետ՝ 5 տոկոս աճի միջոցով: Ծրագրում կարևորվում է նոր աշխատատեղերի ստեղծումը, աշխատավարձերի համակարգված աճը: Նախատեսվում է 10 տոկոսով կրճատել աղքատությունը և կասեցնել արտագաղթը: Մասնավորապես, առաջիկա 3 տարիների ընթացքում նախատեսվում է նվազագույն աշխատավարձը հասցնել 65000 դրամի: Կիրականացվեն քայլեր, որոնք տնտեսության մասնավոր հատվածում ևս կխթանեն աշխատավարձերի աճը, կբարելավեն գյու-

ղի և գյուղացու կյանքի որակը: Այդ նպատակով 2014-2017 թվականներին նախատեսվում է էական աշխատանքներ իրականացնել ջրամբարաշինության բնագավառում՝ սկսելով Կապսի, Վեդու, Եղվարդի և Մաստարայի ջրամբարների նախագծման և շինարարության աշխատանքները: Ջրամբարները հնարավորություն կտան կուտակելու նվազագույնը 145 մլն խմ, իսկ առավելագույնը՝ 180 մլն խմ ջուր: Առաջիկա տարիներին նախատեսվում է ոռոգման ոլորտում, առանց ջրամբարների, կատարել 32 մլրդ դրամի, ճանապարհաշինության ոլորտում՝ 138 մլրդ դրամի, դպրոցաշինության ոլոր-

➤6-7

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱԺ մշտական հանձնաժողովի այցը Դիլիջան

ՀՀ ԱԺ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը ԱՄՆ ՄՁԳ ՀՀ ԱԺ աջակցման ծրագրի հետ համատեղ կազմակերպել էր այց Դիլիջան: Այցի նպատակն էր Տավուշի մարզի համայնքների ղեկավարների, ավագանու անդամների, բնակիչների, տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների ու ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ քննարկել «Համայնքների խոշորացում» թեման:

Հանձնաժողովի նախագահ Ստեփան Մարգարյանը բացման խոսքում նշեց, որ կառավարությունը ծրագրել է գնալ համայնքների խոշորացման: Նրա գնահատմամբ՝ սա կարևոր բարեփոխում է և այցի նպատակն է մինչ խորհրդարանում խոշորացման վերաբերյալ օրինագիծը կործակել շրջանառության, տեղում համայնքի բնակիչների ու ոլորտի պատասխանատուների հետ քննարկել խնդիրը և լսել նրանց կարծիքը: Պարոն Մարգարյանը նշեց, որ նման բարեփոխումներն իրականացնելը բավականին բարդ է, աստիճանաբար պետք է իրականացվի: Նա տեղեկացրեց, որ մի քանի ամիս առաջ համայնքների խոշորացման փորձը ուսումնասիրելու նպատակով իրենք այցելել են Լատվիա և Էստո-

նիա: Ըստ նրա՝ կառավարությունը ճիշտ որոշում է կայացրել՝ սկզբնական շրջանում նախատեսելով համայնքների խոշորացման պիլոտային



ծրագրեր իրականացնել՝ խոշորացման տարբերակները քննարկելու և խնդիրները հասկանալու համար:

➤2

Աժ մշտական հանձնաժողովի այցը Դիլիջան

1» Հանձնաժողովի փոխնախագահ Արայիկ Յովհաննիսյանը նշեց, որ ՀՀ կառավարության կողմից մշակվել է համայնքների խոշորացման հայեցակարգը, կառավարության գործունեության ծրագրում ևս կա դրույթ համայնքների խոշորացման վերաբերյալ: Պարոն Յովհաննիսյանը ընդգծեց, որ ինքնապատակ խոշորացում չի լինելու, համայնքների խոշորացման բարեփոխման հաստատման համար յուրաքանչյուր խոշորացվող համայնքում տեղի է ունենալու տեղական հանրաքվե՝ բնակչության կարծիքը լսելու համար: Նա ասաց, որ այժմ մի շարք համայնքների խոշորացման վերաբերյալ ուսումնասիրություններ են իրականացվում, քննարկումներ են կազմակերպվում:

Հանձնաժողովի անդամներ Մնացական Մնացականյանը և Արայիկ Արաբաբյանը, մարզից մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավոր Հակոբ Հակոբյանը կարևորեցին

նման հանդիպումները՝ բնակիչների ընկալումները հասկանալու և առաջարկներին տեղում ծանոթանալու տեսանկյունից: Նրանք համոզմունք հայտնեցին, որ այս հանդիպումների արդյունքում հնարավոր կլինի ճշտել, թե խոշորացման ինչպիսի մոդել է անհրաժեշտ մեր երկրին ու քաղաքացիներին և հավաստիացրին, որ հնչած բոլոր առաջարկները ներկայացվելու են՝ կառավարության հետ հարցը քննարկելիս:

Քննարկումն անցավ մեծ ակտիվության պայմաններում: Ելույթ ունեցողները խոսեցին և իրենց մտահոգություններն արտահայտեցին համայնքների խոշորացման փնջային և շրջանային մոդելների, նրանց դերի բարձրացման, խոշորացման արդյունքում աշխատատեղերի կրճատման հնարավորության, համայնքապետերի և ավագանիների լիազորությունների, տարածքների համաչափ զարգացման և այլ հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովի անդամները և «Համայնքների



ֆինանսիստների միավորում» ՀԿ նախագահ Վահան Մովսիսյանը ներկայացրին խոշորացման ծրագրերի սկզբունքներն ու մոտեցումները, պատասխանեցին ներկայացրած հարցերին: Համայնքի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին Աժ մշտական հանձնաժողովին այցի համար: Ամփոփելով քննարկումները՝ հանձ-

նաժողովի նախագահ Ստեփան Մարգարյանը շնորհակալություն հայտնեց շահագրգիռ քննարկումների համար՝ նշելով, որ հանձնաժողովը աշխատում է բաց և հրապարակային, պատրաստ է հանդիպելու և քննարկելու բոլոր առաջարկները և դիտողությունները: Նա տեղեկացրեց, որ համայնքների խոշորացման վերաբերյալ քննարկումներ կլինեն նաև այլ մարզերում:

Հովիկ Աբրահամյանը խորհրդակցություն է անցկացրել մարզպետների հետ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի մոտ տեղի է ունեցել մարզերի խնդիրներին նվիրված խորհրդակցություն:

Կառավարության ղեկավարը նշել է, որ մեծ ակնկալիք ունի մարզպետներից՝ կառավարության տարբեր ծրագրեր հաջողությամբ իրականացնելու գործում: «Մարզերը մեզ համար ունեն մեծ կարևորություն և այստեղ միասին մեծ աշխատանք ունենք իրականացնելու: Որպես վարչապետ լինելու եմ ձեր կողքին, յուրաքանչյուր հարց գտնվելու է իմ ուշադրության կենտրոնում: Պետք է կայացնենք ոչ ստանդարտ որոշումներ, գնահատենք լավը, իսկ վատը քննադատենք», - դիմելով մարզպետներին՝ ասել է Հովիկ Աբրահամյանը:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը վարչապետին զեկուցել է ՀՀ կառավարության կողմից մարզերում իրականացվող ծրագրերի մասին: Մասնավորապես, մանրամասն ներկայացվել են 2014 թվականի մարտին ցրտահարությունից տուժած գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող աջակցության ծրագրերը: Շեշտվել է, որ կառավարության օժանդակության ծրագրերից օգտվող տնտեսությունների ցուցակներն առաջիկայում պետք է հրապարակվեն մարզպետարանների կայքէջերում: Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է մարզպետներին մանրամասն ուսումնասիրել տնտեսությունների կրած վնասը՝ անհատական կարգով օժանդակություն ցուցաբերելու համար:



Վարչապետին տեղեկացվել է նաև, որ ընթացիկ տարում բոլոր մարզերում տեղադրվել է 80 հակակարկտային կայան, որոնք գործելու են արտակարգ իրավիճակների նախարարության միասնական կառավարման համակարգի ներքո:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող աջակցությանը, մասնավորապես, պարարտանյութի, դիզվառելիքի, սերմացուի տրամադրման աշխատանքների ընթացքին առնչվող հարցեր:

Անդրադառնալով մարզերում կառավարության կողմից իրականացվող 5-րդ հրատապ ծրագրին՝ Արմեն Գևորգյանը նշել է, որ մարզերում տարբեր ոլորտներում ընթացիկ տարում նախատեսվում է իրականացնել 442 ծրագիր՝ բնակֆոնդի արդիականացման, բնակարանաշինության, նախադպրոցական հաստատությունների վերանորոգման, ջրամատակարարման, մշակույթի օբյեկտների կառուցման և այլ ուղղություններով:

Վարչապետը պահանջել է իրավասու մարմիններից՝ բոլոր ծրագրերով անվերապահորեն ապահովել աշխատանքների բարձր որակ և նշել, որ այդ հարցը գտնվելու է իր ուշադրության կենտրոնում:



Քննարկում Ագարակում՝ համայնքների խոշորացման վերաբերյալ

Սյունիքի մարզի Ագարակ քաղաքում կազմակերպվել էր կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էին Մեղրու տարածաշրջանի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարներ, տարածաշրջանում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքական կազմակերպությունների ղեկավարներ, ինչպես նաև շահագրգիռ քաղաքացիներ:



Քննարկման թեման վերաբերում էր համայնքների խոշորացմանը: Քննարկմանը «Նախաձեռնություն և զարգացում» համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունը ներկայացրեց ծրագրի էությունը, կարևորվեցին հանրության տարբեր տեսակետները և հանրային իրազեկվածության բարձրացումը: Այնուհետև հնչեցին տարբեր կարծիքներ, եղան հարցեր և պարզաբանումներ, քննարկվեցին ծրագրի դրական և բացասական կողմերը: Ծրագրի տնտեսական առանձնահատկությունների և առավելությունների մասին խոսեց նաև Ագարակի քաղաքապետ Ս.Զաքարյանը:



Տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման նախարարին կից կոլեգիայի նիստը



Տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման նախարարին կից կոլեգիայի նիստը, որը վարում էր տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչության պետ Արթուր Սողոմոնյանը ներկայացրեց համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հավելավճարների կիրառման ուղղությամբ մշակված առաջարկությունները, ինչպես նաև համայնքային պաշտոնների կառուցվածքի վերաբերյալ վերլուծությունների արդյունքները:

«Համայնքային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների համաձայն՝ զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար նախատեսվում է հավելավճարի կիրառում: Ըստ ՏԻՄ օրենքի՝ հավելավճարի կիրառման կարգը և չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Օրենքների պահանջների կիրառման միասնական մոտեցումների սահմանման նպատակով մշակվել են առաջարկություններ, որոնք հետագայում կներկայացվեն համայնքներին՝ որպես մեթոդական ուղեցույցներ:

Վ. Տերտերյանը կարևորեց օրենքների պահանջների միասնական կիրառելիության ապահովման նպատակով խորհրդատվական նյութերի մշակումը և հանձնարարեց ամբողջացնել փաստաթղթերն ու տրամադրել համայնքներին:

Օրակարգի մյուս հարցը վերաբերում էր արխիվային ուղորտին: Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը ներկայացրեց «Արխիվային գործի մասին» և «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերը, որոնցով փորձ է արվում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումներով պայմանավորված նոր իրողություններին օրենսդրական համապատասխան կարգավորումներ տալ:

Մասնավորապես առաջարկվում է սահմանել «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությունը, դրա պահպանության, արխիվացման և օգտագործման սկզբունքները: Ըստ Ա. Վիրաբյանի՝ փաստաթղթերի հիմնական նպատակը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ստեղծվող էլեկտրոնային փաստաթղթերի արխիվացման և հետագա պահպանության ու օգտագործման ապահովումն է, քաղաքացիներին արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրումը, ինչպես նաև հասարակության համար առցանց կարգով արխիվային տեղեկությունների մատչելիության ընդլայնումը: Առաջիկայում նախագծերը կներկայացվեն կառավարություն:

ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության պետ Գագիկ Եգանյանը կոլեգիային ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության միգրացիայի ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում, Մաքսային միությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելու ուղղված գործողությունների 2014-2016 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ըստ զեկուցողի՝ փաստաթղթի մշակումը «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրի» պահանջ է և նպատակ ունի հեշտացնել Եվրամիության և Հայաստանի միջև մարդկանց տեղաշարժը, ապահովել ապաստանի և փախստականների վերաբերյալ ազգային օրենսդրության միջազգային փաստաթղթերով սահմանված չափանիշներին ու սկզբունքներին համապատասխանեցումը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքում հաշվառվելու, գտնվելու և տեղաշարժվելու ոլորտում:

Նշվեց, որ փաստաթուղթը ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը և առաջիկայում կուղարկվի կառավարություն: Կոլեգիան քննարկված բոլոր հարցերն ընդունեց ի գիտություն:

Ամփոփվեց ՀՀ վարչապետի «Լավագույն կին գործարար-2014» մրցանակաբաշխությունը

Ամփոփվել են «Լավագույն համայնք՝ կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ», «Լավագույն կին գործարար», «Լավագույն լրագրող՝ կանանց հիմնախնդիրների լուսաբանման գործում» ՀՀ վարչապետի 2014 թվականի մրցանակաբաշխության արդյունքները: Մրցանակները հանձնվեցին ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի համոզիսավոր նիստում, որը կայացավ Հայաստանի ազգային պատկերասրահի հայ հին և միջնադարյան արվեստի սրահում:



Տարբեր անվանակարգերում շնորհված պատվոգրերը հաղթողներին հանձնեց ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը:

Եվ այսպես, «Լավագույն կին գործատու» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևանից՝ Գոհար Հարությունյանը՝ «Իզոտեխ» ընկերության հիմնադիր, Սյունիքի մարզից՝ Սոնա Բալասանյանը՝ «Գորիսի միկրոշարժիչ» ընկերության հիմնադիր:

«Լավագույն կին նորարար» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևան քաղաքից՝ Նաիրա Բալասանյանը՝ «Արթուսի» ընկերության հիմնադիր-տնօրեն, Վայոց Ձորի մարզից Լիանա Գրիգորյանը՝ «Բոնուս Առևտրի Կենտրոնի» տնօրեն:

«Լավագույն կին բաժնեգործ» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևանից՝ Շաբե Հավան Կարապետյանը՝ «Արտ Բրիջ» ընկերության հիմնադիր-տնօրեն և Լոռու մարզից անհատ ձեռներեց Այծեմնիկ Օհանյանը:



«Լավագույն ապրանքանիշ» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևան քաղաքից՝ Կարինե Ավետիսյանը՝ «Կառա ընդ կո» ընկերության հիմնադիր, Արագածոտնի մարզից Վիկտորյա Ասլանյանը՝ «Գուլն Գրեյվ Արմա» ընկերության տնօրեն:

«Լավագույն երիտասարդ կին գործարար» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևան քաղաքից՝ Մարինե Ներսիսյանը՝ «Գանգես» ընկերության հիմնադիր-տնօրեն և Արմավիրի մարզից անհատ ձեռներեց Էմմա Մարգարյանը:

«Լավագույն սկսնակ կին գործարար» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևանից՝ Արմինե Մուրադյանը՝ «ԵՎԱՍ» ընկերության հիմնադիր-տնօրեն, Տավուշի մարզից Նուբար Սահակյանը՝ անհատ ձեռներեց:

Մրցանակաբաշխության համար Հայաստանում կանանց ձեռնարկատիրական գործունեությունը և նախաձեռնողությունը խրախուսելու, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումները ըստ ար-

ժանվային զնահատելու նպատակով խրախուսական պատվոգրեր, նվերներ և մրցանակներ էին սահմանել նաև միջազգային մի շարք կազմակերպություններ՝ ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն» հանուն գյուղական համայնքների զարգացման» ծրագիրը (USAID/PRP), ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP), ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբեղակույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակը (UNHCR), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման ծրագիրը (UNIDO), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), Ասիական զարգացման բանկը (ADB), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), ՎԶԵԲ Գործարարության աջակցման գրասենյակը (EBRD/BSO), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման ծրագրի «Հայաստանի երիտասարդության ձեռնարկատիրական գործունեության օժանդակություն» ծրագիրը, ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագիրը (USAID/EDMC):

«Լավագույն քաղաքային համայնք՝ զենդերային հարցերի լուծման ուղղությամբ» անվանակարգում հաղթող է ճանաչվել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքային համայնքը, 2-րդ և 3-րդ տեղերում են համապատասխանաբար ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան և ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքները:

«Լավագույն գյուղական համայնք՝ զենդերային հարցերի լուծման ուղղությամբ» անվանակարգում հաղթող է ճանաչվել ՀՀ Վայոց Ձորի մարզի Գոմք գյուղական համայնքը, 2-րդ և 3-րդ տեղերում հաղթող են ճանաչվել համապատասխանաբար ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ և ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղական համայնքները:

Ոլորտում ակտիվ գործունեություն ծավալելու համար պարգևատրվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղաքար համայնքի ղեկավար Կարինե Մարտիրոսյանը, ՀՀ Լոռու մարզի Մեղվահովիտ համայնքի ղեկավար Համեստ Հահբազյանը և ՀՀ Սյունիքի մարզի Լիծք համայնքի ավագանու անդամ Թագուհի Մարգարյանը:

«Լավագույն լրագրող՝ կանանց հիմնախնդիրների լուսաբանման գործում» մրցանակաբաշխության «Լավագույն գաղափար» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Հ2»-ի լրագրող Արփինե Թամարազյանը:

«Լավագույն լրագրողական աշխատանք» անվանակարգում «Միր» հ/ը լրագրող Իրինա Սկրտչյանը, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» անվանակարգում՝ «Ար» հ/ը-ից Կարեն Խաչատրյանը, «Նախաձեռնող կնոջ կերպար» անվանակարգում՝ «Հետք» /Գ լրագրող Երանուհի Սողոմյանը, «Կարծրատիպերի կտրում» անվանակարգում՝ «News.am»-ից Ինգա Մարտինյանը:

ԿՅԱՆՔԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ. ԼՈՒԻ

«Ժողովրդավարության ձևավորման հեռանկարները ՏԻՄ-ում և կանանց մասնակցության ակտիվացման հիմնախնդիրները»

Լոռու մարզպետարանում տեղի ունեցավ «Ժողովրդավարության ձևավորման հեռանկարները տեղական ինքնակառավարման համակարգում և կանանց մասնակցության ակտիվացման հիմնախնդիրները» թեմայով մարզային համաժողով:

Համաժողովն անցկացվեց «Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում կանանց արդյունավետ մասնակցության կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից, ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համագործակցությամբ և Լոռու մարզպետարանի աջակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է իրականացվում է Եվրոպական Միության ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից:

Լիագումար նիստին, որին ներկա էր մարզպետ Արթուր Նալբանդյանը, մասնակցեցին մարզի ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային համայնքների կառավարման ոլորտի կին աշխատակիցներ:

Հայաստանում բարձրագույն կրթություն ունեցողների 60 տոկոսը կանայք են, այլ կերպ` յուրաքանչյուր հինգերորդ կին մեր երկրում ստացել է բարձրագույն կրթություն: Եվ չնայած այս ցուցանիշներին` հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներգրավվածության մակարդակը բավական ցածր է. 10 տոկոս` համայնքի ավագանու կազմում, և ընդամենը 2 տոկոս` համայնքի ղեկավարի պաշտոնում:

- Այս առումով Լոռու մարզում վիճակագրությունը համեմատաբար

բարվոր է. մարզում ունենք 98 կին ավագանու անդամ, համայնքապետերի և աշխատակազմի ղեկավարի պաշտոնում ևս կանայք կան, - իր խոսքում նշեց համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Լոռու մարզային կենտրոնի ղեկավար Արմենուհի Կյուրեղյանը` այս հարցում կարևորելով նաև ՋԼՄ-ների դերը:

«Համայնքի զարգացման գործընթացներում բնակիչների մասնակցությունը` որպես արդիական հիմնախնդիր. փորձ, ձեռքբերումներ և հեռանկարներ» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Թումանյան համայնքի ավագանու անդամ Անահիտ Ռամազյանը, ով համայնքային խնդիրների լուծման ուղղությամբ բնակիչների մասնակցությունն ավելացնելու նպատակով կատարված սեփական ուսումնասիրությունների արդյունքում առանձ-

նացրեց մի շարք գործոններ: Դրանցից կարևորվեց հատկապես բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև վստահությունը իրենց կողմից ընտրված ավագանու անդամների նկատմամբ:

Ծրագիրն իրականացվում է երեք տարի և դրական տեղաշարժեր արդեն իսկ նկատվում են:

- Մարդիկ ակտիվացել են, համայնքային լսումներ են կազմակերպում, որոշ համայնքներում արդեն փորձում են քննարկել համայնքի բյուջեն, դա արդեն մեծ առաջընթաց է, - համոզված է Արմենուհի Կյուրեղյանը:

Տեղական ժողովրդավարությունը առհասարակ ժողովրդավարության հիմքն է: Այս տեսակետից տեղական ժողովրդավարությունը առանց կանանց մասնակցության իրատեսական չէ, քանի որ բնակչության կեսից ավելին կանայք են: Բացի այդ, միևնույն խնդրի վերաբերյալ կանանց և տղամարդկանց դիրքորոշումները տարբեր են, ուստի կարևոր է դրանց զուգորդումը:

ԿՈՏԱՅՔ

Գործում է բարեգործական ճաշարան

Բյուրեղավան համայնքում բացվեց բարեգործական ճաշարան: Ծառարանը ֆինանսավորվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ-ի արևելյան թեմի, Հայ Օգնության Ֆոնդի (FAR) կողմից: Այն նախատեսված է մինչև 150 շահառուի համար, ծառայությունից օգտվում են միայն տարեցները: Այս պահին օգտվողների թիվը հասնում է 96-ի` միայնակներ, տարեցներ, հաշմանդամներ: Քաղաքապետարանի միջնորդությամբ ժամանակավոր օգտվում է նաև մեկ բազմազավակ ընտանիք և սոցիալապես ծայրահեղ անապահով երկու ընտանիք: «Նմանատիպ ճաշարան 19 տարի գործել է Նոր Հաճըն քաղաքում, իսկ Բյուրեղավանը ընտրվել է մեր կողմից` հարցումների արդյունքում», - ասաց բարեգործական ճաշարանի համակարգող Ռաֆիկ Մարտիրոսյանը. «ՏԻՄ-ը սիրով ընդունեց մեր առաջարկը, քաղաքապետարանի սոցիալական

բաժնի աշխատակիցները հավաքեցին և մեզ ներկայացրեցին ցուցակը: Տրամադրեցին տարածք, անհրաժեշտ սպասք: Համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը պատրաստակամություն հայտնեց աջակցել բոլոր հարցերում, օգտակար լինել բոլոր շահառուներին»: Բացելով այս ճաշարանը, լուծվել է 4 բյուրեղավանցու զբաղվածության խնդիր: Բարեգործական ճաշարանը գործում է ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից: Տրամադրում է օրական 1 անգամյա սնունդ` տաք ճաշ, փլավ, աղցան, հյութ: Ըստ սեզոնի, սննդակարգը կենթարկվի փոփոխության: Հաշվի առնելով մեր հասարակության կարծրատիպերը, դեռևս մարդիկ մտորումների մեջ են` օգտվեն, թե ոչ: Այնինչ աշխարհի քաղաքակիրթ երկրներում գործում են նմանատիպ ճաշարաններ: Բյուրեղավանի բարեգործական ճաշարանը թեթևացնում է կարիքավոր ընտանիքների հոգսը:

ԱՐԱԳԱԾՈՏՆ

Թալինում կայացավ քաղաքային զբոսայգու բացումը

Արագածոտնի մարզի Թալին քաղաքում օրը տոնական էր: Առիթը քաղաքային զբոսայգու բացումն էր, որն անցկացվեց Մանուկների պաշտպանության միջազգային օրվա շրջանակում:

Զբոսայգու հիմնանորոգման ծրագիրն իրականացվել է «Վորլդ Վիժն-Հայաստան» կազմակերպության և Թալինի քաղաքապետարանի կողմից, որին իր անմիջական աջակցությունն է ունեցել մարզպետարանը:

Զբոսայգու բացմանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը և Հարավային Կովկասի ազգային տնօրեն Հանս Բեդերսլին: Այնուհետև մասնակիցները, որոնց թվում էին նաև փոխմարզպետ Նուրե Մովսիսյանը, Թալինի քաղաքապետ Սարգիս Արամյանը, «Վորլդ Վիժն-Հայաստան»-ի տնօրեն Ժիրայր Էդիլյանը, կառույցի շինարարները, այլ հյուրեր, ինչպես նաև տեղի և հարևան համայնքների հարյուրավոր բնակիչներ, շրջեցին նորաբաց զբոսայգում, ծանոթացան գեղատեսիլ կառույցի հնարա-



Վորություններին:

Բարեկարգ ձեռնդիրները, ծաղկամարգերը, խաղահրապարակը, լողավազանը, բացօթյա բեմահարթակը նախատեսված են ամենատարբեր տարիքի այցելուների համար:

Հանդիսությունն ուներ նաև գեղարվեստական մաս, որտեղ հնչեցին բազմաթիվ շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքեր, ինչպես նաև հավաստիացումներ առ այն, որ նման ծրագրերը շարունակական են լինելու: Հանդիսատեսին երաժշտական գեղեցիկ կատարումներով ողջունեցին Թալինի մանկապարտեզի, երաժշտական դպրոցի սաները, մշակույթի տան հանույթները:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ



Շախմատային տոն Գավառ քաղաքում

«Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ, «Գեղարեզ» կրթամշակութային հասարակական կազմակերպությունը 2014 թվականին Գավառ քաղաքում և նրա հարակից 11 համայնքներում անցկացրեց շախմատի պատանիների և երիտասարդների տարածքային առաջնություն` 11-25 տարեկանների շրջանում:

Առաջնությունն անցկացվեց երկու փուլով: Առաջին` համայնքային փուլի մրցումներին մասնակցեց 269 պատանի շախմատիստ: Այս փուլում հաղթող ճանաչված 38 շախմատիստ մասնակցեցին մրցաշարի եզրափակիչ փուլին, որի փակման հանդիսավոր արարողությանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետ, մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը, ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանը, այլ պաշտոնյաներ: Եզրափակիչ փուլի հանդիսավոր արարողության ընթացքում նախաձեռնող կազմակերպությունների կողմից պատվոգրերով, շնորհակալագրերով և հուշանվերներով խրախուսվեցին համայնքային փուլում առաջին, երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած բոլոր մասնակիցները և եզրափակիչ փուլում առաջին 6 տեղերը զբաղեցրած շախմատիստները: «Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի

հովանավորությամբ եզրափակիչ փուլում հաղթող ճանաչված 6 մասնակիցները հնարավորություն կունենան իրենց ամառային հանգիստը կազմակերպել մարզի տարածքում և «Պատիվ ունեն...» ռազմահայրենասիրական ծրագրի շրջանակներում այցելել զորամաս, իրենց շախմատային կարողությունները փորձել զինվորների հետ: Մրցաշարի ընթացքում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար խրախուսվեցին նաև լավագույն մարզիչները և հանրակրթական դպրոցները: Մարզի ղեկավարն իր գոհունակությունն հայտնեց նման նախաձեռնության համար: Նրա խոսքով հենց այստեղից են սկիզբ առնում շախմատային մեծ հաղթանակները: Իսկ այս մրցապայքարում աչքի ընկած շախմատիստները մարզպետի առաջարկով ցանկության դեպքում կարող են ներկա գտնվել նաև «Սևանա Լիճ- 2014 թ.» շախմատի միջազգային մրցաշարին: Իր հերթին նախաձեռնությունը կարևորեց նաև ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահը: Նրա խոսքով Գեղարքունիքի մարզը աստիճանաբար ձեռք է բերում շախմատային համբավ: Ուստի հարկավոր է խրախուսել շախմատի հանդեպ հետաքրքրություն ցուցաբերած երեխաներին: Հանդիպման ավարտին գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը միաժամանակյա խաղ անցկացրեց մրցաշարի 14 ուժեղագույն շախմատիստների հետ:

Թափոնների կառավարման նորարարական փորձի ներդրումը Վրաստանի, Մոլդովայի և Հայաստանի ընտրված քաղաքներում



«Սևծովյան ավազանի 2007-2013 թթ. միասնական գործողությունների ծրագրի» Ֆինանսական աջակցությամբ սկսվում է Թափոնների ինովացիոն կառավարման փորձի ներդրումը Վրաստանի, Մոլդովայի և Հայաստանի ընտրված քաղաքներում: Նախագծի նպատակն է աջակցել շրջակա միջավայրի և բնակչության կենսամակարդակի որակի բարելավմանը Սևծովյան տարածաշրջանի երկրների հետևյալ քաղաքներում՝ Քութայիսի (Վրաստան), Ունգերի (Մոլդովա) և Արարատ (Հայաստան)՝ թափոնների կառավարման ժամանակակից մեթոդների ներդրմամբ:



Ծրագրի իրականացման մեջ ներգրավված երկրները չորսն են՝ Ռումինիա, Վրաստան, Մոլդովա և Հայաստան: Ծրագրի մասնակիցներն են ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, մասնավորապես, Քութայիսի քաղաքապետարանը (հայտատու գործընկեր), Ունգերիի քաղաքապետարանը և ավազանին, Արարատի քաղաքապետարանը, այնպես էլ հասարակական կազմակերպությունները և ոչ կառավարական կազմակերպությունները: Խորհրդատվական էկո-կենտրոն՝ Գալատի(Ռումինիա), «Սպեկտր» Գիտնականների ասոցիացիան՝ Իմերեթի տարածաշրջան (Վրաստան), «Կայուն զարգացման տարածաշրջանային կենտրոն»՝

(Մոլդովա) և «Բնապահպանական գոյատևում»՝ (Հայաստան):
Ծրագրի տևողությունը 2 տարի է:
Ծրագրի իրականացման ընթացքում նախագծի մասնակից քաղաքների ներկայացուցիչները կծանոթանան թափոնների կառավարման նորարարական մեթոդներին Եվրոմիության երկրներում, մասնավորապես Ռումինիայի օրինակով, որպեսզի հետագայում նպաստեն ներդրմանը իրենց քաղաքներում:
Ծրագրով նախատեսվում է իրականացնել ուսումնական շրջագայություններ, վերապատրաստման դասընթացներ: Թափոնների կառավարման ռումինական փորձագետները կուսումնասիրեն թափոնների կառավարման վիճակը ընտրված քաղաքներում՝ Քութայիսի (Վրաստան), Ունգերի (Մոլդովա) և Արարատ (Հայաստան), կնշակվեն առաջարկություններ, որոնց հիման վրա շահագրգիռ կողմի մասնակցությամբ կստեղծվի թափոնների կառավարման գործողությունների ծրագիր:
Կնախապատրաստվեն և կիրատարակվեն թափոնների կառավարման ժամանակակից մեթոդների ազգային լեզուներով ուղեցույցներ:
Նախագիծը նախատեսում է միջոցառումների անցկացում Քութայիսիում՝ առանձին աղբահանության վերաբերյալ, Արարատում՝ աղբի կոմպոստավորման:
Ունգերիի մասնակիցների համար, որոնք ունեն որոշակի փորձ աղբի առանձին հավաքման մեթոդների մասին, նախագիծը կդառնա հիանալի միջոց նոր գիտելիքների ձեռքբերման համար, կկարևորվի իրենց փորձի փոխանցումը մյուս երկրների մասնակիցներին:
Ծրագիրը նախատեսվում է իրականացնել նաև աշակերտների համար, հատուկ ուշադրություն է դարձվելու լրագրողների, մանկավարժների և այլ թիրախային խմբերի:

«Ներքին կանոնակարգերի և ընթացակարգերի կիրառումն համայնքապետարաններում» թեմայով աշխատանքային հանդիպումներ Հայաստանի երեք քաղաքներում

Սիսիանում տեղի ունեցավ «Ներքին կանոնակարգերի և ընթացակարգերի կիրառումն համայնքապետարաններում» թեմայով աշխատանքային հանդիպումներից երրորդը: Նախորդ հանդիպումներն անցկացվել են Վանաձորում և Երևանում:
Աշխատանքային հանդիպումները կազմակերպվել են Զառուբերփարթ ինթերնեշնլի՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության» ծրագրի շրջանակներում, որոնց նպատակն էր բացահայտել համայնքապետարանների ներքին կանոնակարգերը և ընթացակարգերի առկայությունը, քննարկել դրանց գործնական կողմերը, քանի որ դրանք անհրաժեշտ են համայնքապետարանների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար:
Քննարկման թեմաներից էին՝ ղեկավարում և ռազմավարական պլանավորում, ծառայությունների մատուցում և որակի վերահսկում, արտաքին հարաբերություններ, հաղորդակցում, բյուջետավորում և ֆինանսական կառավարում և վարչական կառավարում: Երեք հանդիպումներն էլ արդյունավետ էին, քանի որ մասնակիցներն ակտիվ էին ու ներգրավված:



ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ մարզերի բնակչության թվի բյուջեի և համայնքների աշխատակազմերի, ՀՈԱԿ-ների և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի մասին

Հ/Հ	Մարզի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 01.01.2013թ. դրությամբ (մարդ)	Ընդամենը բյուջետային ծախսեր, հազ. դրամ 2013	2014թ.-ի պլանավորված բյուջեն	Պաշտոնների թիվը 2014							Համայնքային ենթակառուցված կազմակերպություններ						
					Համայնքի ղեկավար	Համայնքի ղեկավարի տեղակալ	Համայնքի ղեկավարի օգնական, խորհրդակցական, ռեֆերենտ	Համայնքային ծառայության պաշտոններ	Տեխնիկական սպասարկում իրականացողներ	Քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողներ	Ընդամենը աշխատակազմ 2014	Աշխատակիցների թվաքանակի տարբերությունը 2013թ.-ի համեմատ	Մոբիլով նախատեսվածից ավել աշխատակիցների թիվը	կազմակերպությունների քանակը 2014թ.	կազմակերպությունների թվաքանակի տարբերությունը 2013թ.-ի համեմատ	հաստիքային միավորների թիվը 2014թ.	աշխատակիցների թվաքանակը 2014թ.	աշխատակիցների թվաքանակի տարբերությունը 2013թ.-ի համեմատ
1	ԱՐԱԳԱՍՏՈՆ	147966	2481228.5	3036007.1	114	43	9	469	302	158	1095	-110	183	65	10	851.8	927	102
2	ԱՐԱՐԱՏ	254509.4	4,789,928.2	5,260,961.9	97	67	26	560	346	165	1,261	-135	169	123	-1	1898.693	2003	40
3	ԱՐՄԱՎԻՐ	287,305	5,008,204.0	5,908,514.2	97	87	19	631	308	45	1,187	-186	66	166	21	2377.10	2409	121
4	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	240,940	3,945,902.9	4,917,228.7	91	71	48	563	358	48	1,179	-63	204	112	-4	1499.21	1615	-15
5	ԼՈՌԻ	295286	5991452.3	5862320.0	113	79	38	688	306	156	1380	-23	122	153	0	2292.63	2,314	28
6	ԿՈՏԱՅՔ	297673	5,341,038.4	5,935,666.2	67	60	34	589	281	40	1,071	-40	151	127	0	2994.81	3059	73
7	ՇԻՐԱԿ	292000	5,302,020.1	6,075,688.0	119	54	19	617	642	183	1,634	-80	83	116	1	2106.58	2116	19
8	ՍՅՈՒՆԻՔ	134,246	3400070.5	3648347.0	109	67	29	390	299	194	1,088	5	250	99	0	2111.8	2126	20
9	ՎԱՅՈՏ ՁՈՐ	58875	1,132,178.0	1,455,537.7	44	15	7	188	159	92	505	-5	136	37	0	384.90	407	9
10	ՏԱՎՈՒՇ	133839	2,279,551.5	2,676,467.6	62	44	20	363	238	28	755	-35	136	92	-5	1154.68	1239	10
ԸՆԴԱՄԵՆԸ		2,142,639	39,671,574	44,776,738	913	587	249	5,058	3,239	1,109	11,155	-672	1,500	1,090	22	17,672	18,215	407

Աղյուսակն ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության mta.gov.am կայքի:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

1> Կառավարության 25 մարտի դրանի, մարզական օբյեկտների վերանորոգման համար՝ 2 մլրդ դրամի, հուշարձանների վերանորոգման համար՝ 1 մլրդ դրամի ներդրումներ:

Պաշտպանության ոլորտին անդրադառնալով՝ ՀՀ վարչապետը նշեց, որ ՀՀ և ԼՂՀ բնակչության անվտանգության երաշխավորումը լինելու է ամբողջական և համապարփակ: ՀՀ վարչապետը տեղեկացրեց, որ որոշակի ծրագրեր են իրականացվելու մասնավորապես առողջապահության և կրթության ոլորտներում, տնտեսության այլ ենթակառուցվածքներում

ներդրվելու են նոր ծրագրեր, որոնք էապես բարելավելու են մատուցվող ծառայությունների որակը:

ՀՀ կառավարությունը հրատապ է համարում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտների վերացումը՝ շարունակաբար բացահայտելով և ներդնելով աջակցության առավել արդյունավետ մեխանիզմներ: Ինչպես նշեց ՀՀ վարչապետ Յուրիկ Աբրահամյանը, կառավարությունը հետևողականորեն, անողոք և անաչառ կերպով պայքարելու է ստվերային տնտեսության դեմ. փաստաթղթավորումը պարտադիր է լինելու բոլորի հա-

մար: Աճելու է հարկեր-ՀՆԱ ցուցանիշը. արդյունքում ավելանալու են ռեսուրսները, սակայն դա լինելու է ոչ մեխանիկորեն, ոչ բարձրացող հարկային դրույթաչափերի հաշվին. ցուցանիշն աճելու է ստվերային շրջանառության կրճատմանը համահունչ: Ծրագրում անդրադարձ կա նաև կուտակային կենսաթոշակների ներդրման հարցին: Վարչապետը վերահաստատեց մոտեցումը, ըստ որի՝ այն պետք է լինի պարտադիր, բայց ոչ պարտադրված: Ինչպես նշեց Յուրիկ Աբրահամյանը, քննարկման փուլում են նոր գաղափարներ և առաջարկներ, որոնք

ընդգրկված չեն ծրագրում, սակայն հանձնարարված է դրանք ուսումնասիրել և տալ եզրակացություններ: Ամփոփելով ելույթը՝ ՀՀ վարչապետ Յուրիկ Աբրահամյանը հավաստիացրեց, որ կառավարությունը իր ծրագրի իրականացման համար խոստանում է անմնացորդ նվիրվածություն և ջանքեր՝ ակնկալելով հանրության աջակցությունը: Այնուհետև տեղի ունեցավ քննարկված հարցերի քվեարկությունը: Ազգային ժողովը 70 կողմ, 1 դեմ և 2 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հավանության արժանացրեց ՀՀ կառավարության ծրագիրը:

ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը շնորհավորեց կառավարությանը և ցանկացավ արգասաբեր ու բեղմնավոր աշխատանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ծրագրի հիմնական դրույթները, ինչպես նաև խորհրդարանական կուսակցությունների ծրագրերում ներկայացված՝ մշակված փաստաթղթերի հետ համադրելի գաղափարները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես իր գործունեության գերակայություն, հռչակում է Հայաստանի Հանրապետության քաղաքացուն. նրա ազատության երաշխավորումը, անվտանգության և բարեկեցության բարձրացման ապահովումը: Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն առավելապես ուղղվելու են Հայաստանի Հանրապետության քաղաքացուն՝ ստեղծագործ աշխատանքով իր հայրենիքում իր ապագան կերտելուն: Հայրենիքը յուրաքանչյուր հայի համար դառնալու է ապահով հանգրվան և սեփական կարողությունների, աշխարհի տարբեր ծագերում կուտակված փորձի ու գիտելիքների առավելագույնս դրսևորման հնարավորության երկիր: Հայաստանի Հանրապետությունը յուրաքանչյուրի համար պետք է դառնա արժանավայել կյանքով ապրելու հնարավորությունների երկիր:

Այս իմաստով ընդգծվում է սահմանադրական բարեփոխումների կարևորությունը՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից: Անհրաժեշտ նախադրյալներ պետք է ստեղծվեն՝ սահմանադրական կայունության ամրապնդման, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության գերակայության և սահմանադրականության հաստատման համար:

Միայն հավասար պայմաններ և իրական մրցակցություն ապահովող միջավայրն է, որ հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության քաղաքացու մեջ արմատավորելու հավատն իր երկրում վաղվա օրվա, հպարտության զգացումն հայրենիքի նկատմամբ: Միայն հասարակության կողմից արդարացիորեն ընկալվող տնտեսական համակարգն է ունակ ապահովելու ներդրումների աճ, ապագայի նկատմամբ հավատով լեցուն, համարձակ կառուցողական քայլերի նախաձեռնում: Նման տնտեսական միջավայրի հրամայականը Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է իրագործի թե՛ երկարաժամկետ հեռանկարում՝ սահմանադրական բարեփոխումների միջոցով աջակցելով բնականոն քաղաքական փոփոխությունների պայմաններում կայուն տնտեսական միջավայրի պահպանմանը, թե՛ անմիջապես՝ տնտեսական միջավայրի առկա խեղաթյուրումների դեմ կտրուկ և հետևողական քայլեր ձեռնարկելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովելու է կանոնների՝ բոլորի համար նույնությամբ կիրառումը և այն, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը բաց լինի թե՛ հայրենական և թե՛ օտար ներդրողների համար: Օտարերկրյա հայտնի ընկերությունների ներգրավումը Հայաստանում լինելու է մեր առաջնահերթություններից: Այս ջանքերը ոչ միայն նպաստելու են հայրենի տնտեսության արտահանման ներուժի ավելացմանը՝ ի հաշիվ օտարերկրյա գործընկերների ավանդական շուկաների օգտագործման, այլև՝ որպես պարզ և հստակ ազդանշան բոլորի համար՝ Հայաստանում տնտեսական ազատ և մրցունակ միջավայրի վերաբերյալ:

Հետզհետե ավելի բարդացող տարածաշրջանային զարգացումների համապատկերում կայուն տնտեսական զարգացման նպատակադրումը կարող է լուծվել միայն ներքին համախմբման, գործունեության արդար պայմաններ պահպանող հասարակական և իշխանական ինստիտուտների կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է աջակցի գործարարին՝ իր գործիքներով լինի անգամ մեկ աշխատատեղ ստեղծող, մեկ նմուշ նոր արտադրանք տվող քաղաքացու կողքին, պետք է նրա համար ապահովի գործարա-

րությամբ զբաղվելու հավասար և բարենպաստ պայմաններ: Իշխանությունների և հասարակության համատեղ ջանքերով ձեռք բերվող տնտեսական աճը հնարավորություն կտա ձեռնամուխ լինելու Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալական հիմնախնդիրների լուծմանը:

Սոցիալական հիմնահարցերի շարքում առանձնանում է տնտեսական աճի հետ անմիջականորեն շաղկապված նոր աշխատատեղերի ստեղծումը: Միայն կայուն աշխատանքն է, որ մեր քաղաքացիներին հնարավորություն կտա լիովին իրացնելու իրենց սոցիալական իրավունքներն ու երաշխիքները, որոնց շարքում հարկ է նշել արժանապատիվ վարձատրությունը:

Բարեկեցիկ կյանք ապահովող վաստակ ունենալու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովելու է աշխատավարձերի համակարգված աճ: Այս աճը լինելու է հետևողական և համաչափ՝ միտված եղած աշխատատեղերը պահպանելուն և նորերի ստեղծումը խթանելուն:

Պետական համակարգի աշխատավարձերի համակարգված և հետևողական աճին զուգահեռ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ջանքեր կգործադրի տնտեսության մասնավոր հատվածում և աշխատավարձերի աճ ապահովելու համար՝ թե՛ նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացման, թե՛ անհրաժեշտ տնտեսական ենթակառուցվածքների ստեղծման և պահպանման, աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարության այս միջոցառումները չեն տարածվելու միայն պետական կազմակերպությունների և խոշոր ընկերությունների վրա: Հայաստանի Հանրապետության կառավարությունն ամեն ջանք գործադրելու է անհատ ձեռներեցների, գյուղացիական տնտեսությունների գործունեության պայմանների անշեղ բարելավման միջոցով նրանց եկամուտների շարունակական աճն ապահովելու համար: Այս առումով կարևոր են լինելու փոքր և միջին բիզնեսի կարգավիճակի հստակեցման ու գործիքների ամբողջ զինանոցով՝ հարկային արտոնություններից մինչև պարզեցված վարչարարություն, նրանց գործուն աջակցություն ցուցաբերելու հետևողական ջանքերը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հատկապես կարևորելու է գյուղի և գյուղացու կյանքի բարելավման խնդիրը: Այստեղ թե՛ ավելացվելու են առկա գործիքներով գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող աջակցության ծավալները, թե՛ մեկնարկելու է կարևորագույն ենթակառուցվածքային ծրագիր՝ հանրապետության մարզերում գյուղատնտեսության կենսունակությունը լրջորեն բարելավելու համար: Մասնավորապես, 2014-2017 թվականների ընթացքում էական աշխատանքներ կկատարվեն ջրամբարաշինության բնագավառում՝ սկսելով չորս կարևորագույն ջրամբարների նախագծման և շինարարության համակարգված աշխատանքները: Այս ծրագիրը հնարավորություն կտա ոչ միայն թեթևացնելու Սևանի բեռը, այլև զգալիորեն բարելավելու հողագործական աշխատանքների արդյունավետությունը: Այս ծրագիրը համակցելով գյուղատնտեսական սուբսիդավորման գրեթե կրկնապատկվող ծավալների հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գյուղատնտեսությամբ զբաղվող մեր քաղաքացիների համար պայմաններ կստեղծի եկամուտների շարունակական աճի համար:

Տնտեսական ենթակառուցվածքների ստեղծումն ու պահպանումը, զուգակցելով տնտեսավարողների համար հավասար պայմանների ստեղծման հետ, հնարավորություն կտան Հայաստանի Հանրապետությանը 2014-2017 թվականների ընդլայնելու տնտեսության ներքին ռեսուրսների վրա հիմնված արտահանման տնտեսական ներուժը, տնտեսությունն ամրապնդելու կայունացման փուլում և նախադրյալներ ստեղծելու հետագա՝ ավելի հավակնոտ և բեկունակային աճի համար:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՎՆԱՎԱԿՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արտաքին աշխարհի էական անորոշությունները սահմանափակում են արտաքին տնտեսությունից ռեսուրսների ներհոսքի հնարավորությունը: Առաջիկա

երեք տարվա ընթացքում տնտեսության ներքին ռեսուրսների վրա հիմնված զարգացումը Հայաստանի տնտեսական աճի ապահովման համար կունենա առաջնային նշանակություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունն այս պայմաններում ակնկալում է արտահանման ծավալների նպատակադրված ավելացմանը հասնել հիմնականում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շնորհիվ, որը ենթադրում է ներքին ռեսուրսների համակարգված և արդյունավետ օգտագործում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն ծրագրի իրականացմամբ 2014-2017 թվականների ընթացքում նպատակադրում է`

- զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում` համախառն ներքին արդյունքի միջնաժամկետ` 5 տոկոս աճի միջոցով.
 - նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացում` մինչև 65000 դրամի.
 - աղքատության կրճատման ապահովում` 10 տոկոսային կետով:
- Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների արդյունքային ցուցանիշները զննհատվել են առկա միտումների հիման վրա: Արտաքին ցնցումների դրսևորումները և Հայաստան ներթափանցման ուղիներն ու ազդեցությունները նկարագրված են սույն ծրագրի վերջին մասում:

2.2.7. Տարածքային համաչափ զարգացումը

Տարածքային զարգացման անհամաչափության հաղթահարումը կարևոր է երկրի ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև երկրի կայուն ու անվտանգ առաջընթացի համար: Հայաստանի Հանրապետության կառավարության գործողություններն այս ոլորտում իրականացվելու են հետևյալ ուղղություններով`

- պետական աջակցության տարբեր ձևերի կիրառմամբ, պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ, նպատակային ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ խրախուսվելու են սոցիալ-տնտեսական առումով առանձնահատուկ նշանակություն ունեցող համայնքների զարգացման տեմպերի արագացումը և ներդրումային ակտիվությունը.
- մշակվելու է տարածքային համաչափ զարգացման նոր գործիքակազմ, մասնավորապես, համայնքներում իրականացվող ներդրումների արդյունավետության բարձրացման նպատակով ձևավորվելու է տարածքային զարգացման հիմնադրամ.
- նախաձեռնվելու են արդյունաբերական ձեռնարկությունների կլաստերների ձևավորումը, արդյունաբերական հարթակների ստեղծումը և այդ ուղղությամբ մասնավոր ներդրումային ծրագրերի ուղղորդումն ու խթանումը.
- Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպաստելու է համայնքներում նրբակցային առավելությունների վրա հիմնված տնտեսական զարգացման տարբեր մոդելների ներդրումը.
- զննհատվելու է մարզերի տնտեսական զարգացման ներուժը և իրականացվելու է զարգացման առավել լայն հեռանկարներ ու հնարավորություններ ունեցող տարածքների բացահայտումը, զննհատված նրբակցային առավելությունների հիման վրա մշակվելու և իրականացվելու են նպատակային զարգացման ծրագրեր.
- առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու սահմանամերձ համայնքների, իրականացվելու են աջակցության նոր նպատակային ծրագրեր:

2.5.2. Տեղական ինքնակառավարումը

Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը միտված է պետության բոլոր մակարդակներում արդյունավետ կառավարման ներուժի զարգացմանը, մասնավորապես, ուղեմիջային են հանդիսանալու Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի «Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում» 2014 թվականի զեկույցի երաշխավորագրից բխող դրույթները:

Ըստ այդմ` Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է`

- բարձրացնել համայնքների ֆինանսական հնարավորությունները` ապահովելով նրանց բյուջեների մուտքերի կայունությունը, այդ թվում` ընդունել տեղական տուրքերի և վճարների հայեցակարգը, մշակել և ընդունել հայեցակարգի կիրարկմանն անհրաժեշտ իրավական ակտերը, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի շեմի հետևողական բարձրացմամբ պայմանավորված` համայնքներին տրամադրել համապատասխան ֆինանսական օժանդակություն.
- շարունակել ապակենտրոնացման գործընթացը, ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների տեսականիշն` միաժամանակ համայնքներում բարձրացնելով դրանց որակը.
- իրականացնել համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերը.
- համայնքների խոշորացման գործընթացին զուգընթաց` վերանայել տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրությունը, մշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենք.
- ապահովել համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների ու գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ.
- բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը.
- շարունակել ավագանու ինստիտուտի կատարելագործմանն ու դերի բարձրացմանն ուղղված քայլերը, ավագանու ձևավորման գործընթացում ավելացնել քաղաքական բաղադրիչը.
- մշակել ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրման օրենսդրական հիմքերը` սահմանելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաների առավել արդյունավետ մեխանիզմ, որի արդյունքում տրամադրվող դոտացիաները կդառնան ավելի հասցեական.
- նախաձեռնել տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի Հայաստանի Հանրապետության կողմից վերապահումով ստորագրված դրույթների ամբողջական կիրառման գործընթացը.
- շարունակել միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցությունը` տեղական ինքնակառավարման ոլորտի հետագա զարգացմանն ուղղված գործողությունները.
- խրախուսել կանանց ակտիվ մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմիններում.
- իրականացնել տեղական մակարդակում որոշումների ընդունմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանումն ապահովող միջոցառումներ.
- խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացումը, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորումը:

Ծրագիրը ներկայացվում է կրճատումներով

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2014

ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը` 1 190
Վավեր քվ.` 495, անվավեր` 4, մարված` 691
Ավագանու անդամության թեկնածուների թիվը` 8,
ընտրված ավագանու 7 անդամները ստացել են վավեր ձայների 94.8 %-ը:

h/h	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱԼԼՈՅԱՆ ԱԼԻԿ ԱՎԴԻԼԱՅԻ	28.02.1978թ.	51 / 10.3
2	ԴԱՎԹԱՆ ԳԵՎՈՐԳ ՈՈՍՏԱՄԻ	22.06.1986թ.	100 / 20.2
3	ԵՐՎԱՆԴՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՈԱԶՄԻԿԻ	31.03.1966թ.	46 / 9.2
4	ԴԱԶԱՐՅԱՆ ԱԼԻԿ ՎԱԿԱՐՇԱԿԻ	09.11.1986թ.	45 / 9
5	ՄԻՔՆԵԼՅԱՆ ԱԼԱԿԻԿ ԴԵՄԻՐՃԻ	06.10.1979թ.	96 / 19.3
6	ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿՈԼԵՆ ՎԱՆԻԿԻ	18.05.1987թ.	26 / 5.2
7	ՊՈՂՈՍՅԱՆ ԶԱՎԵՆ ՊՈՂՈՍԻ	10.08.1987թ.	98 / 19.7
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՍԲԱՐՉՈՒՄԻ	01.07.1964թ.	33 / 6.6

ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը` 713
Վավեր քվ.` 468, անվավեր` 9, մարված` 236
Ավագանու անդամության թեկնածուների թիվը` 6,
ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 95.5 %-ը:

h/h	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ ՈԱՅԻԿԻ	18.08.1962թ.	71 / 15.1
2	ԽԱԶՍՏՐՅԱՆ ԳՆԵԼ ՆՈՐԻԿԻ	20.07.1978թ.	32 / 6.8
3	ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱԿՈՐ ՈԱԶՄԻԿԻ	16.03.1969թ.	117 / 25
4	ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅՎԱԶԻ	02.01.1968թ.	26 / 5.5
5	ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՄԼԱՅԱ ՍՈՒՐԵՆԻ	24.09.1956թ.	112 / 23.9
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆԻ	26.04.1970թ.	105 / 22.4

ՀՀ Արմավիրի մարզի Դաշտ համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը` 730
Վավեր քվ.` 258, անվավեր` 6, մարված` 466
Ավագանու անդամության թեկնածուների թիվը` 5,
ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 100 %-ը:

h/h	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՐԲԱՅԱՍՅԱՆ ԱՇՈՏ ԺՈՐՃԻ	06.09.1970թ.	56 / 21.7
2	ԱՐԱԶՆՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ ԵՐՁՈՅԻ	16.01.1990թ.	56 / 21.7
3	ՍՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՍՈՆ ԺՈՐՃԻ	30.07.1967թ.	69 / 26.7
4	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ ԱՐԱՍՄՅԻՄԻ	21.03.1977թ.	38 / 14.7
5	ԴԱՐԻՔՅԱՆ ՎԱՐԴԱԵՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	03.11.1983թ.	39 / 15.1

ՀՀ Կոտայքի մարզի Արգակ համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը` 2 211
Վավեր քվ.` 1 371, անվավեր` 26, մարված` 814
Ավագանու անդամության թեկնածուների թիվը` 12,
ընտրված ավագանու 9 անդամները ստացել են վավեր ձայների 86.6 %-ը:

h/h	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐԻ	21.08.1979թ.	159 / 11.5
2	ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐԱՍՄՅԻՄԻ	05.05.1970թ.	117 / 8.5
3	ԽԼԴԱԹՅԱՆ ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼԻ	15.08.1980թ.	232 / 16.9
4	ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ ՄԱՅԻՍԻ	06.02.1981թ.	99 / 7.2
5	ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱԿՈՐԻ	01.09.1958թ.	138 / 10
6	ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ ՀՈՎՍԵԹԻ	06.04.1989թ.	49 / 3.5
7	ՀՈՎՍԵԹՅԱՆ ՀԱԿՈՐ ՈՈՒԴԻԿԻ	29.08.1972թ.	111 / 8
8	ՄԱՐԿՈՍՅԱՆ ՍԵՎԱԿ ՄԵՍՐՈՊԻ	03.01.1984թ.	111 / 8
9	ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՆՇԱՆԻ	10.01.1972թ.	114 / 8.3
10	ՄԵԼՔՈՆՅԱՆ ԽԱԶՂԻԿ ԲԱԿՂԻԿԻ	05.10.1964թ.	104 / 7.5
11	ՊԱՐՍՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱՐԱՐՍԻ	06.04.1958թ.	79 / 5.7
12	ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԻ	13.01.1958թ.	58 / 4.2

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2014

ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 09.13.2014թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 713 Վավեր քվ.՝ 471, անվավեր՝ 6, մարված՝ 236

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Արդվի համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 144 Վավեր քվ.՝ 82, անվավեր՝ 2, մարված՝ 60

Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 6, ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 92.7 %-ը:

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Աթան համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 219 Վավեր քվ.՝ 163, անվավեր՝ 2, մարված՝ 54

Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 8, ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 74.4 %-ը:

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Աթան համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 09.13.2014թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 219 Վավեր քվ.՝ 163, անվավեր՝ 2, մարված՝ 54

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Նովոսելցովո համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 119 Վավեր քվ.՝ 65, անվավեր՝ 1, մարված՝ 53

Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 5, ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 100 %-ը:

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Նովոսելցովո համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 09.13.2014թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 119 Վավեր քվ.՝ 66, անվավեր՝ 0, մարված՝ 53

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

USAID COUNTERPART INTERNATIONAL logo and text: Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում՝ Հայաստանի ավագանիների ասոցիացիայի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին (հեղինակներին)՝ Հայաստանի ավագանիների ասոցիացիային, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 1 545 Վավեր քվ.՝ 879, անվավեր՝ 34, մարված՝ 632 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 9, ընտրված ավագանու 7 անդամները ստացել են վավեր ձայների 92.3 %-ը:

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 09.13.2014թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 1 545 Վավեր քվ.՝ 882, անվավեր՝ 31, մարված՝ 632

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Լեռնավան համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 1 220 Վավեր քվ.՝ 841, անվավեր՝ 29, մարված՝ 350 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 8, ընտրված ավագանու 7 անդամները ստացել են վավեր ձայների 92.4 %-ը:

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 09.13.2014թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 1220 Վավեր քվ.՝ 856, անվավեր՝ 14, մարված՝ 350

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Չորամուտ համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 377 Վավեր քվ.՝ 129, անվավեր՝ 2, մարված՝ 246 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 5, ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 100 %-ը:

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Չորամուտ համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 09.13.2014թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 377 Վավեր քվ.՝ 131, անվավեր՝ 0, մարված՝ 246

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Պետրովկա համայնքի նորընտիր ավագանու անդամների վերաբերյալ ընտրված 09.03.2014թ. ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 196 Վավեր քվ.՝ 106, անվավեր՝ 0, մարված՝ 90 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 6, ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 93.4 %-ը:

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը

ՀՀ Լոռու մարզի Պետրովկա համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 09.13.2014թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 196 Վավեր քվ.՝ 106, անվավեր՝ 0, մարված՝ 90

Table with 4 columns: h/h, Ազգանուն, Անուն, Հայրանուն, Ծննդյան օր, ամիս, թիվ, Ստացած ձայների թիվ/տոկոսը